**ԱԿՏ ԾԱՌԵՐԻ ՏԵՂԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՏՄԱՆ (ՀԱՏՄԱՆ) ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Քաջարան համայնք** 04 նոյեմբերի 2026թ.

**Հանձնաժողովի (կամ մասնագիտական խմբի) կազմը.**

- **Նախագահ՝** Զոհրապ Առաքելյան, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
- **Անդամներ՝**

1. Գ. Գաբրիելյան – համայնքապետարանի բնապ., գյուղատնտ., տնտ. զարգացման ծրագրերի բաժնի պետ
2. Հ. Կարախանյան - քաղաքաշինության,հողի վերահսկողության, կոմ.ընտ., տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ
3. Գ. Ստեփանյան – «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ սանմաքրման, բարեկարգման, աղբահանության ստորաբաժանման ղեկավար

Սույն ակտը կազմված է այն մասին, որ հանձնաժողովը իրականացրել է Քաջարան քաղաքի Խանջյան, Աբովյան, Լեռնագործներ փողոցների բուսածածկույթի և ծառերի տեխնիկական ու սանիտարական վիճակի տեղազննություն:

1. **Տեղազննության արդյունքները**
   1.1 Քաջարան քաղաքի Խանջյան փողոցի 1,1ա շենքերի և Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի հարակից տարածքներում աճող բարդի տեսակի ծառերը վթարային են և վտանգ են ներկայացնում հարակից շինություններին, դպրոցի տարածքին ու երթևեկելի գոտուն:
   Առաջարկվում է իրականացնել ծառերի վթարային (խորը) էտ:
   1.2 Լեռնագործներ փողոցի կենտրոնական պուրակի հարակից տարածքում աճող տանձենին վնասված է և ենթակա է հատման:
   1.3 Լեռնագործներ փողոցի կենտրոնական պուրակի հարակից տարածքում և Աբովյան փողոցում աճող բարդի ծառերը վթարային են:
   Առաջարկվում է իրականացնել ծառերի վթարային (խորը) էտ:

2. **Հանձնաժողովի եզրակացությունը և առաջարկությունները**
   2.1 Թույլատրել իրականացնել վերոնշյալ ***ծառերի էտման և*** հատման աշխատանքները:
   2.2 Էտման և հատման աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները և բնապահպանական ստանդարտները:
   2.3 Էտումից առաջացած փայտանյութը և ճյուղերը հաշվառել և տեղափոխել «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ պահեստային տարածք:

1. **Հանձնաժողովի անդամների ստորագրություններ՝**

- **Հանձնաժողովի նախագահ՝** Զ. Առաքելյան / _____ /
- **Անդամներ՝**
  - Գ. Գաբրիելյան / _____ /
  - Հ. Կարախանյան / _____ /
  - Գ. Ստեփանյան / _____ /